ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Նիստի անցկացման՝
-վայրը՝Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 29.03.2019թ.
-ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Բաբինյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Անտոնյանը, Տ. Սարգսյանը, Ա. Խառատյանը, Զ. Գեդեյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. Հայտերի բացման մասին

1.1. Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի մարտի 29-ին, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.2 Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/27» ծածկագրով գնանշման հարցման հրավերին էլեկտրոնային համակարգով /www.armeps.am/ առգիծ հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	«Ավէմեդ» ՍՊԸ
2	«Սիուն» ՍՊԸ
3	«Մեդտեխսերվիս» ՍՊԸ
4	«Դիավանտ» ՍՊԸ

2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գին	«Ավէմեդ» ՍՊԸ	«Սիուն» ՍՊԸ	«Մեղտեխսերվիս» ՍՊԸ	«Դիավանտ» ՍՊԸ
			առանց ԱԱՀ	առանց ԱԱՀ	առանց ԱԱՀ	առանց ԱԱՀ
1	ՈՒլտրաձայնային հետազոտման սարք	8500000	**7650000**	**8284000**	**8250000**	**5940000**

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

3.1. Մասնակիցների կողմից ներկայացված յուրաքանչյուր բացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են.

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, բացառությամբ «Ավէմեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի, այն է՝ էլեկտրոնային թվային ստորագրությունը հաստատված է մի անձի կողմից, ում ստորագրությունը չի նույնականացվում «Ավէմեդ» ՍՊԸ-ի տնօրենի ստորագրության հետ՝ առկա չէ փաստաթուղթ (լիազորագիր), որը հավաստում է, որ տվյալ անձն իրավասություն ունի «Ավէմեդ» ՍՊԸ-ի տնօրենի անունից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու փաստաթղթեր: Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, որոշեց մերժել «Ավէմեդ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

3.3. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հ/Հ	1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել			2-րդ տեղ զբաղեցրած մասնակից	3-րդ տեղ զբաղեցրած մասնակից
	Մասնակցի անուն	Պայմ. գին	ԱԱՀ		
1	«Դիավանտ» ՍՊԸ	**5940000**	-	«Մեղտեխսերվիս» ՍՊԸ	«Սիուն» ՍՊԸ

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

3.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps համակարգով վերջացնել գնահատումը, որից գնահատման հաշվետվության բեռնումից հետո (Evaluation) առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Կ. Բաբինյան
Անդամներ՝		Գ. Անտոնյան
		Տ. Սարգսյան
		Ա. Խառատյան
		Հ. Գեդելյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան